Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
«16» մարտ 2018 թ.
թիվ 680 – Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

«ԱԿՆԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՄԱՅՈՎ ՆԵՐԶԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Ապրիլի 16, 2018թ., ք. Երևան (Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն)

Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ

09:30-10:00	Մասնակիցների գրանցում, նախաթեստ:	
10:00-11:15	Ցանցաթաղանթի անատոմիա և ֆիզիոլոգիա:	Սիրանույշ Մատինյան
11:15-12:30	Տեսողական օրգանի ախտահարումը շաքարային դիաբետի ժամանակ:	պրոֆ. Արմեն Վարդանյան
12:30-13:00	Ընդմիջում:	
13:00-15:00	Դիաբետիկ ռետինոպաթիայով հիվանդների հետազոտում:	պրոֆ. Արմեն Վարդանյան, Սիրանույշ Մատինյան, Լիլիթ Աբգարյան
15:00-15:30	Գրավոր թեստ:	

Թիրախային լսարան՝ ներզատաբաններ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 7 հոգի:

Սեմինարի մաս հանդիսացող «Հիվանդների հետազոտում» հատվածում նախատեսվում է իրականացնել ինչպես խորհրդատվության տրամադրում՝ դասընթացավարների կողմից մասնակիցներին, այնպես էլ դասընթացավարների կողմից գործիքային հետազոտությունների անցկացում: Գործիքային հետազոտություններն անցկացնելու են ՄԱԿ-ի մասնագետները: Պլանավորվում է Մալայանի անվ. ակնաբուժական կենտրոնի վիտրեոռետինալ բաժանմունքում հասանելի և տվյալ հիվանդի զննման և հետազոտման համար անհրաժեշտ գործիքների և սարքավորումների կիրառում: Հետազոտությունները ներառում են՝ տեսողության սրության չափում, ներակնային ճնշման չափում, բիոմիկրոսկոպիա, բիոմիկրոֆթալմոսկոպիա, օֆթալմոսկոպիա (անուղղակի), ակնային ՈւՁ հետազոտություն, օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա (OCT):

Յուրաքանչյուր հիվանդի (կլինիկական դեպքի) շուրջ կայանալու է դասընթացավարների և մասնակիցների միջև քննարկում, հիվանդի գանգատների և օբյեկտիվ զննման

արդյունքների վերլուծություն, դասընթացավարների կողմից առաջարկությունների ներկայացում և հիվանդի՝ լավագույն (օպտիմալ) բուժման պլանի մշակում՝ հիվանդի հետագա վարման նպատակով: